


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Յիսուս կ'ընտրէ տասներկու օգնականներ



Written by: Edward Hughes
Illustrated by: Byron Unger; Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Story 39 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada
License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Յիսուս հրաշալի գործեր ըրաւ: Ան հիւանդները
բժշկեց, խաղաղութիւն տուաւ բոլոր անոնց, որոնք
հոգիով կը տառապէին իրենց մեղքերուն եւ
սրտերուն մէջ եւ Աստուծոյ խօսքը սորվեցուց:



1

Բազմութիւններ եկան Յիսուսի,
որպէսզի օգնութիւն եւ
բժշկութիւն ստանան:




2

Ան որոշեց տասներկու հոգի գառել իր հետևորդներէն, որպէսզի օգնեն իրեն իր Աստուծոյ նուիրեալ գործին մէջ:



3

Եթէ շատ կարեւոր ընտրութիւններ պիտի ընես կ'աղօթես Աստուծոյ: Յիսուս աղօթեց: Լուռ լերան վրայ Ան իր երկնաւոր հօր հետ խօսեցաւ: Յիսուս աղօթեց միևնչէլ արեւնամուտ:



4



Յիսուս աղօթեց ամբողջ մութ գիշերուան ընթացքին:

5



Առաւօտուն Յիսուս կանչեց իր հետևորդները եւ բոլոր իր ընկերները, որոնք իրեն ծառայեցին եւ ենթարկուեցան իրեն:

6



Անոնց մէջէն տասներկու անձ գառեց, որ իր մասնաւոր օգնականները կամ առաքեալները ըլլան:

7



Առաջին երկուքը, զոր Յիսուս գառեց եղբայրներ էին, Սիմոն Պետրոս եւ Անդրեաս: Անոնք ձգեցին իրենց ձկնորսութեան գործը երբ Յիսուս առաջին անգամէն կանչեց անոնց որ հետեւին իրեն:


8

Յակոբոս եւ Յովհաննէս,
Չեբեդիոսի տղաքը, Յուդան
Յակոբոսին եղբայրը եւ Յուդա
Իսկարիովտացիի, որ ետքը Յիսուսին
թշնամին դարձաւ:



9

Քրիստոս Նաւ ընտրեց Ֆիլիպին, Բարդուղիմէոս
առաքյալին, Մեթյուէին, Թոմասին, Սայմոն, Հուդայի,
Տէյմս եւ Հուդայի՝ որ ավելի
ուշ Քրիստոսի թշնամի
դարձավ:




10

Յիսուս ստրկեցուց, որ եթէ գործադրէին ինչ
որ ինք կ'ըսէ կը նմանի տուն մը շինելու գորաւոր
հիմներու վրայ: Չօրաւոր
փոթորիկներ չեն
կրնար քանդել
այդ տունը:



11

Սակայն Յիսուսի խօսքերուն չի հնազանդիլ կը
նմանի տուն շինել աւագի վրայ: Երբ փոթորիկ մը
գայ տունը կը փլի:




12

Յիսուսին կարգ մը հրամանները դիւրին չեն.
"Եթէ մէկը ապտակէ աջ երեսիդ
աւոր դարձուր ձախ երեսդ": Ան
աւելցուց. "Միտէ թշնամիներդ"
ժողովուրդը Աստուծոյ
օգնութեան պէտք ունին,
որպէսզի
Յիսուսի
պէս
ապրին:



13

Յիսուս նաեւ ըսաւ, որ ժողովուրդը գաղտնի պէտք
է աղօթ, պէտք չէ ցուցադրութիւն ընել աղօթած
ատեն եւ ուրիշներուն առջեւ
ցոյց տալ, որ կ'աղօթենք,
ինչպէս կարգ մը կղերական
քահանայապետեր կ'ընեն:



14

Յիսուս ըսաւ, որ Աստուած կը կերակրէ եւ կը հագեցնէ ժողովուրդը, որ իրեն կը վստահի, ...



15

... քանի որ Աստուած կը կերակրէ թռչունները եւ գեղեցիկ գունաւոր ծաղիկներ եւ թուփեր, իր ժողովուրդը կրնայ վստահիլ իրեն իր բոլոր պէտքերուն համար:



16

Յիսուս սորվեցուց իր նորընտիր օգնականներուն շատ մը բաներ այդ օրը: Երբ ան վերջացուց, բորոտ մը եկաւ, աղաչելով Յիսուսին, որ զինք բժշկէ:



17

Յիսուս ըսաւ բորոտին. "Պիտի ըսեմ, մաքրուիր": Մինչ իր օգնականները կը դիտէին, բորոտը մաքրուեցաւ եւ լաւացաւ:

Ան առողջացաւ: Միայն Աստուծոյ որդին կրնայ այդ իրականացնել: Օգնականները գիտէին, որ հրաշալի վարպետ մը ունէին:



18

Յիսուս կ'ընտրէ տասներկու օգնականներ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթեոս 4 - 74 Մատի 1, Ղուկաս 6

"Ընդ խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16